ՎԵՍՏ ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ ԵՎ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՊԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սարգիս վարդապետի «Հարցմունք…»-ը XI - XII դարերի գրական ուշագրավ հուշարձան է՝ միջնադարյան թղթագրության մի կարևոր նմուշ[1]: Նրա հեղինակային պատկանելության մասին շատ սուղ տեղեկություններ են պահպանվել, և ստույգ հայտնի չէ ո՛չ նամակագրի, ո՛չ հասցեատիրոջ ով լինելը՝ անկախ վերնագրային հաղորդումից[2]: Գրիգոր Պահլավունի անվամբ հայտնի են Գրիգոր Մագիստրոսը (990-1058), նրա որդի Վահրամը՝ հետագայում հայոց կաթողիկոս Գրիգոր Վկայասերը (1065-1105), նրան հաջորդած Գրիգոր Պահ-լավունին (1113-1165)՝ Ներսես Շնորհալու եղբայրը, և Գրիգոր Տղան (1173-1193): Բոլորն էլ ժամանակի ամենաուսյալ և հայ եկեղեցու կյանքում կարևորագույն դեր խաղացած մշակութային գործիչներ են, որոնց մի մասը (բացի Մագիստրոսից) նախապես եղել են աշխարհականներ: Նրանցից յուրաքանչյուրը կարող էր այդ անվամբ հիշատակվել: Սարգիսներ բավական շատ են՝ Գրիգոր Մագիստրոսի նամակագիրները՝ Սարգիս Անեցի, Սարգիս Սևանեցի, Սարգիս Ս. Կարապետի[3] (XI դար) և վարդապետ Սարգիս Շնորհալի (XII դար), որի մասին կխոսվի: Հայտնի է, որ Գր. Մագիստրոսի Սարգիս անունով երեք նամակագիրներ էլ բարձրաստիճան կրոնական գործիչներ են: Իսկապես հնարավոր է, որ նրանցից մեկը պահքերի վերաբերյալ բացատրական նամակ հղեր Մագիստրոսին, որը չափազանց հետաքրքրասեր անձնավորություն էր: Ուրեմն այս նամակագրական կապը միանգամայն հնարավոր է: Սակայն բացառված չէ նաև, որ այն ուղղված լինի քիչ ավելի ուշ ապրած հայոց կաթողիկոսներից որևէ մեկին՝ Գրիգոր Վկայասերին, Գրիգոր Պահլավունուն կամ Գրիգոր Տղային: Չէ՞ որ նրանց օրոք բորբոքված միջեկեղեցական հակամարտությունը բյուզանդացիների հետ հանգեցրեց պահքերի շուրջ ծագած նոր բանավեճերի: Ղ. Ալիշանի և Գ. Զարբհանալյանի կարծիքով, նամակի հեղինակը Սարգիս Շնորհալին է[4]: Ցավոք, երկու գիտնականներն էլ չեն նշում իրենց ձեռագիր կամ տպագիր աղբյուրի մասին և նամակի բովանդակության վերաբերյալ: Գիտենք միայն, որ Սարգիսը Սև լեռան Քարաշատի վանքում է գործել և այնտեղ էլ գրել «Կաթողիկէ թղթերի մեկնութիւն» աշխատությունը (1155-1166 թթ.) և մի թուղթ: Նրա՝ հեղինակ լինելը ևս այս դեպքում իրական է

---

[1] Այս թուղթն ընդօրինակված է Երևանի Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի N 4669 ձեռագիր ժողովածուից (1675թ.արտագրություն), էջ 113ա-117բ:

[2] Ժամանակին մենք անդրադարձել ենք այս թղթին՝ ենթադրելով, թե այն Գր. Մագիստրոսին ուղղված անհայտ մի նամակ է. տե՛ս **Մխիթարյան Ս.,** Նորահայտ մի թուղթ՝ ուղղված Գր. Մագիստրոսին (Բանբեր Երևանի համալսարանի, N 1, 1989, էջ 129-132):

[3] Տե՛ս **Կոստանեանց Կ.,** Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 295-298:

[4] Տե՛ս **Ալիշան Ղ.,** Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 114-115: **Զարբհանալեան Գ.,** Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ դար), Վենետիկ, 1886, էջ 627:

թվում: Մաշտոցյան մատենադարանում կա մեկ ձեռագիր՝ N 4669-ը (XVII դարի ընդօրինակում՝ արտագրված բավական լուրջ աղճատումներով): Մի քանի տեղերում գործածված են գաղափարագրեր՝ որպես համառոտագրության նշաններ, որոնք հղել ենք աստղանիշերով:

Նամակագիրը պահքերի խնդիրը քննում է լայն համատեքստով: Առաջավորաց պահքը, ըստ նամակագրի, երկու ընկալման է արժանացել.

1. Հինկտակարանական, երբ հարցը վերաբերել է Ադամին և հետագայում՝ նինվեացիներին.

2. Քրիստոնեական, երբ վերաբերել է Գրիգոր Լուսավորչին:

Այս պահքը համարվել է հայկական[5], զուտ ազգային: Այն, ըստ ավանդության, հաստատվել է Գր. Լուսավորչի կողմից և տևել է 5 օր: Պահքի սկիզբը տոնացույցերում սահմանվել է հունվարի 11-ից[6] և նախորդել է Մեծ պահքին՝ կատարվելով նրանից 3 շաբաթ առաջ:

Անդրադառնալով հունական Պանրուտի պահքին՝ թղթագիրը գտնում է, որ ամեն ինչ հարթ է ընթացել, մինչև Քաղկեդոնի ժողովը և նրա կողմից ընդունված օրենքները: Նույնիսկ զարմացած է, թե ինչպես հույները այդ մոլորության մեջ ընկան: Այնուհետև խոսում է Մեծ պահքի ու նրա առանձնահատկությունների մասին: Ներկայացվող թուղթը կրոնադավանաբանական և քաղաքական նշանակություն ուներ միջնադարի համար: Հեղինակն ավարտում է այն՝ օգտագործելով վերջողջույնի ընդունված բանաձևը: Պարզ է դառնում, որ նամակագիրները զբաղված են եղել ժամանակի կարևոր խնդիրներով:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ս. Մ.

Թուղթ

Հարցմունք Գրիգորի Պահլաւուն [ւ]ոյ և վեստարխի և պատասխանի Սարգիս վարդապետի և զիտնականի վասն Առաջաւորի պահոցն

Որ հարցեալ էր ի քէն, թէ զի՞նչ է պատճառն, որ հայ ազգդ պահեն (զ) Առաջաւորի պահսն, և այլազգ ոչ պահեն. կամ զի՞նչ է պատճառն, որ Հոռոմք Պանրուտ առնեն, և Հայք ոչ առնեն, կամ է՞ր զշաբաթ և զկիրակէն ոմանք ուտեն ի հայազանց, և այլք պահեն: Եւ արդ, լսիցես հարցմանցդ և զպատասխանիդ ընկալցիս մի ըստ միոջէ: Վասն Առաջաւորի պահոցն ոմանք այսպէս ասացին, թէ նախաստեղծէն Ադամայ եդաւ առաջին պահս ի դրախտին: Ասէ Աստուած. «Ամենայն ծառիցդ ուտելով՝ կերիցես, բայց միայն զայս [որ] ասացի քեզ, մի՛ ուտիցես ի նմանէ, զի մի մեռանիցիս»: Եւ այս եդաւ առաջին պահս, զոր ոչ պահելով՝ արտաքս անկաւ ի դրախտէն և ի կենաց փայտէն, և յԱստուծոյ տարագրեցաք: Պահեսցուք, զի

[5] Տե՛ս **Մանուկեան Արտ.** արք., Հայ եկեղեցու տօները (5-րդ տպագրութիւն), Թեհրան, 1994, էջ 55-58:

[6] Տե՛ս **Օրմանյան Մ.,** Ծիսական բառարան, Ե., 1992, էջ 7-8:

անդանօր մտցուք, ուստի արտակացեալ եղաք: Զառաջին պահս այն Առաջին պահոցն աւրինակ՝ ասացին ոմանք: Այլք ասացին, թէ Նինուէացիքն առաջին պահս պահեցին և ապրեցան, որ հրաւիրեցան ի մարգարէէն [յ]անդունդս դժոխոց: Եւ մեք, որ ծառայեաք մահու ապականութեան, պահեսցու[ք], զի լեալ[7] նմանութիւն նոցա՝ ազատեսցուք: Եւ այլ[ք] ասացին, թէ Յակոբոս՝ եղբայր Տեառն, և այլ առաքեալք հաւր եդին զպահս Աղուհացիցն, զոր նորա հաւատիցն, ոչ կարացին տանել, տրտնջացին, և առաքեալքն խոնարհեցան ի նոցա տկարութիւն՝ զբազում շաբաթսն ուտել հրամայեցին: Եւ զայն աւուրքն, զոր առաջն պահեալ էին, զայն հրամայեցին ամենայն ամի անխափան պահել: Եւ այլք ասեն, թէ Սեղբեստրոս Հռոմայեցին հրամայեաց է (7) աւր պահել, յորժամ հաւատաց Կոստանդիանոս, և այն ասի Առաջի պահս ամենեքեան, թէ ոմանց ճշմարիտ էր ի շնորհացն Աստուծոյ, ապա թէ ոչ իւրեանց գնասցեն ճանապարհ: Արդ ասացից քեզ. «Ո՛վ ուսումնասէր, բայց երևի թիւրք հաստատագոյն և ճշմարիտ պատճառ Առաջաւորի պահոցն և ոչ նեղ կարծելի, զի շնորհաւք Տէառն զգիտութեան պահեստ ի համակցութիւն[8] լիով ունիցիմք, և վասն այսր ակն երևակի ասեմ քեզ: Զի յորժամ արքայն Հայոց Տրդատ զՍուրբն Գրիգոր յետ բազում չարչարանաց ընկեաց զնա յանհնարին խոր վիրա-պին, և եհաս նմա պատուհաս [յ]Աստուծոյ Ամենակալէն՝ անասուն եղեալ Տրդատ, խոզ տղմասէր և ի դիւաց մոլեալ ի շամբս եղեգանց բնակէր: Եւ մարդասիրին Աստուծոյ գթացեալ հրամայեաց հանել զԳրիգորիս անհնարին վիրապէն անդ, որոյ եկեալ մաղթողական աղօթիւք հայցէր Աստուծոյ գալ ի լաւութիւն: Եւ ընկալաւ Աստուած զխնդրելին և ապա ուսուցանէր նոցա զհաւատ ճշմարիտ, և ի բաց կալ ի սնոտի կռոցն և ծառայեալ Աստուծոյ կենդան[ւ]ոյ և ապրել անշէջ հրոյն: Զայս վարդապետաց նոցա աւուրս Կ (60) և նոքա եկեալ ի զգաստութիւն, ծանեան զարարիչն իւրեանց և խնդրեցին զլուսաւոր մկրտութիւն: Եւ առեալ մկրտէ զնոսա ի Հայր և ի Սուրբ Հոգին և հաստատեաց ի հաւատս ճշմարիտս: Եւ յետ այսորիկ աւրինադրէ նոցա պահս հնգօրեայ: Եւ այս առաջին պահս աւրինադրեցաւ ի Լուսաւորչէ մերմէ յաշխարհիս Հայոց: Եւ մեր վասն այսորիկ պահեմք զսա Առաաջաւորի պահս: Եւ այսորիկ յետ բազում ժամանակաց Սրբոյն Սարգիսի նահատակութիւն է կատարումն. պահոցն աւուր Շաբաթու ի նմին ամսեան մարտիրոսութեան կատարումն եղև, զի թագաւորն Հայոց վախճանեալ էր, և բռնակալութիւն պարսից զօրացեալ: Որ էր թագաւոր ամբարիշտն Յազկերտ[9] և Յունաց թագաւորն Փոքրն Թէոդոս: Ի սոցոց[10] աւուրն եղև նահատակութիւն Սրբոյն Սարգիսի [յ]Արտաշատ քաղաք, որ ցայժմ[11] կոչի Դրւին[12], և մեք տօնեմք զյիշատակ մարտիրոսութեան նորա աւուրն այնմիկ և ոչ ասեմք զպահս սորա[13][….]Գրեցաք՝

[7] Բնագրում՝ լսեալ:
[8] Ցամակցութիւն ձևով:
[9] Ազկերտ:
[10] Փոխ. ի սոցունց:
[11] Բնագրում՝ յայժմ:
[12] Փոխ. Դուին:
[13] Ընդհատված մաս:

որպէս զԱղուհացիցն զառաջին շաբաթն պահեմք, ըստ այնմ աւրինակի իմասցիս և որ ի կարգին է: Եւ այդ էր աւանդութիւն մերոյ ազգիս, և այլ առասպելաբանութիւն ոչ ընդունիմք: Արդ բաւական է իմաստնոյդ: Իսկ որ վասն Պանրուտոյին է՝ ի Քրիստոնեայս հարցեր՝ ընդէ՞ր[14] Հոռոմք Պանրուտոյ առնեն, և Հայք ոչ առնեն: Մեք զայս գտաք պատճառ ի գրոյն Թէոդորոսի Իմաստասիրի և գիտնականի, և էր ազգ[աւ] ի Յունաստանէն: Սա է այսպէս. Յորժամ բարեպաշտ մեծն Կոստանդիանոս վա[խ]ճանեցաւ և նորին որդեօքն Կոստաս և Կոստանդ[15], և յետ սոցա թագաւորեաց ամբարիշտն Յուլիանոս, որ ուրացաւ զՔրիստոս և կռոց երկիր եպագ և դիւաց զոհս մատոյց և կամեցաւ ի դիւացն զոհից գաղտագողի ճաշակեցուցանել քրիստոնէիցն և հաղորդս առնել դիւաց: Եւ իմացեալ հաւատացելոցն եբաց կացին ամենայն մարդոյ, զի մի բանադատեսցեն զամբարշտէն Յուլիանոսէ, թէ. «նդէ՞ր ոչ ուտեք ի զոհիցն, զոր ես ուտեմ»: Եւ հաւատացեալքն հաց ու պանիր ուտէին միայն: Ճաշակէին և զերկրորդ շաբաթն առաւել պահէին և զխորամանկութիւն թագաւորին ամօթ արարին, և նա գնացեալ ընդդէմ պարսից ի պատերազմին, և եկեալն յետ, աներևութից հարկանէր ի սիրտ նորա, և առժամայն սատակեցաւ: Այդ էր պատճառ, զոր ասացաքդ, եթէ ոք իմաստասիրեսցէ, մեք չունեմք վիճաբանութիւն, զի Հայոց ազգիս ոչ գտաք[16] աւանդութիւն Պանրուտոյ առնել: Իսկ վասն Աղուհացիցն էիք հարցեալ[17], թէ ընդէ՞ր ոմանք ոչ ուտեն: Եւ արդ ասացից պատճառն: Զի թագաւորն Յունաց Հերակլ ժողով արար ի Կարնոյ քաղաքիս բազում յիմաստասիրացն Յունաց և զայլ ոմանս ի Հայոց և կամեցաւ քննութեան առնել հաւատոց: Եզր կաթողիկոս Հայոց, տգետ գոլով և առանց դպրութեան, հաւանեցաւ Քաղկեդոնի ժողովոյն և զՍուրբ Գրիգորի ուղղափառ հաւատս ուրացաւ և ինքն չարամահ եղեալ՝ սատակեցաւ, և զկնի նորա Զ (6) կաթողիկոս նստան Քաղկեդոնի հաւատովն, և ՂԶ (96) տարի հայք Քաղկեդոնի հաւատով կացին և զամենայն պահս ի բաց բարձին: Եւ յետ այսորիկ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ ընտրեցաւ յաթոռ հայրապետության Յովհան՝ իմաստասէր և գիտուն աստուածեղէն գրոց, և արար ժողով ի Մանածկերտ[18] քաղաք բազում եպիսկոպոսօք և վարդապետօք: Եւ զԱռաջին հաւատս հաստատեցին, զոր Սրբոյն Գրիգորի էր աւանդեալ: Եւ զպահս Քառասնորդացն իբրև զմի ուրբաթ հրամայեցին պահել և զձուկն, և զձեթ, և զգինի ի բաց բարձին: Իսկ ոմանք յորովայնամոլիցն աղաչեցին սակաւիկ ինչ թուլացուցանել, զշաբաթ և զկիրակէ ի կթոյ ճաշակել, և Սուրբ հայրապետն երկիւղացեալ, զի մի Քաղկեդոնի ժողովոյն հաւանեալ այնպիսիքն զամենայն պահս լուծանիցին: Իսկ ոմանք, որք ճգնաւորք էին և առաքինիքն, իբրև ամի ուրբաթ զամենայն պահս պահեցին մինչև ցկատարածի յաշխարհս: Բայց յոյժ զարմացեալ եմ ընդ աշխարհն Յունաց, թէ ուստի ընկալան այսպիսի անօրէն օրէնք, որոյ ոչ ի մարգարէիցն ունեն վկայութիւն և ոչ ի աւետարանչացն, զոր

[14] Բնագրում՝ առանձին:
[15] Կոստանդ անունն աղավաղված է:
[16] Գթալ:
[17] Հարցնել:
[18] Իմա՛ Մանազկերտ:

զկանոնական պահս լուծանէին. զծովակն, զձէթն և զգինին անխտիր ճաշակեն: Զձուկ[19] [….]վիշապս է, և առաքեալն մարմին ասէ: Այլ մարմին անասնոց և այլ մարմին ձկանց: Եւ Բարսեղ Կեսարու հայրապետն գաւազան ասէ և Աստուածաբանն՝ Լևիթան թագաւոր[20], որ ի ծովու է, որ զայս ջուր ասէ և ուտէ ի պահոցն: Թագաւոր է ի գիտութենէ, բայց դու աստանօր ինձ իմաց զայս արանց սրբազանից, որք զինեցան պահաւք և պնդութեամբ: ԶՄովսէս ասեմ, պահեաց զԽ (40) տիւ և զԽ (40) գիշեր:Հաց ոչ եկեր և ջուր ոչ էարբ և՛ ձկան, և՛ ձիթոյ, և՛ գինւոյ յիշատակ ոչ երևին. նմանապէս և Եղիայ զնոյն հանդէս. հանդիսաւ և Յիսուս Քրիստոս զԽ (40) տիւ և զԽ (40) գիշեր պահեաց ի փորձութեան և ապա քաղայեաւ[21]: Արդ նորանք, որ կերողք են և արբեցողք, զոր են ի պահեալ զՄովսէսին, թէ զՔրիստոսին, որ ոչ ընդ սահմանադրութիւն պահեն, օտար են ի ճշմարտութենէ զնա, մահակել[22] անեն ի պահոցն վարձատրութիւն: Զայս ձեզ համառօտագոյն, կարճ ի կարճոյ դրոշմեցի և աղոթիւք կնքեցի, զի ծանիցես զկոչմունս (և ապա տեսող եղև փառացն Աստուծոյ և Տեառն մեր) հարցմանցդ, զոր խնդրեցէր՝ ողջ լինել ձեզ ձեռօք հայցեմ ի Քրիստոսէ: Իսկ որ հարցեալ էիք, թէ ընդէ՞ր Հայք զձկունքն և՛ զձէթ, և՛ զպանիր, և՛ զիւղ մի՛ ասեն. և արդ այս է պատճառն: Հրամայեաց Աստուած Մովսէս կազմել զիւղ սրբութեան ի խակութենէ ձիթոյ, և անուանեցաւ նա իւղ սրբութեան, որք հայրապետք և թագաւորք օծանէին ընդ նա զնարդոսն և զկինամոնն և զխակ եղեգն և զհալուէն, զոր պատրաստեն ընդ աւրինացն և այլ միրգքն: Փայտ և իւղոյ ասասցեն զձիթենին և աստուածընկալ Ը (8) թագաւորէն Դաւիթ զձէթն իւղանուռն է, որ խորհրդածութեան մեռոն կոչեն և նովաւ օծանեն սեղան պատարագին[23]: Յորժամ հեղու քահանայապետն ի վերայ գագաթան սեղանին և ապա բարձր ձայնիւ օծեր իւղով զգլուխ իմ և որ ի կարգին: Իսկ աւետարանիչն Մատթէոս ի կուսանաց ճառէն ասաց. «Յորժամ ընդառաջ փեսային եղին Ժ (10) կուսանք ե-ն (5) յիմարք էին և ե-ն (5) իմաստունք[24]. իմաստունք բարձին ձէթ, և յիմարքն ոչ բարձին: Յետ սակաւ աւուրց, յորժամ շիջան լապտերքն նոցա, ասեն. «Տու՛ք մեզ յիւղոյդ ձերմէ»: Եւ ոչ ընկալան զխնդրելին, զոր յայցեցին: Ամեայն Աստուածային Գիրք զձէթն իւղ են ասեալ --Ծ--[25] վերագոյն գրով դրոշմեցի, զի մի ունին զօրութիւն ի լուսաւորել և օծանել ընդ նմա, որ ասէ. «Զծերութիւն իմ ի ձէթ պարարտութեան». և նովաւ կնքէ ամենայն խորհուրդ և բան մեր. խաչ և եկեղեցի նովաւ հաւաստի հաւատ ամենայն քրիստոնէից: Զիւղ սրբութեան ասեմք զմեռոնն: Այս է խորհուրդ, որ մի ասեմք զիւղն և զձէթն: Իսկ եթէ ընդէ՞ր ասէր զձկնկիթ, զի նմանի թռչուն. կերպարանի նմա դա ինձ զայս խորհուրդ:

---

[19] Հավանաբար Լևիթան ձուկն է դա, որի մասին է խոսվում ավելի ուշ: Կա ջնջված հատված:

[20] Բնագրում՝ Լեւեթան, որ եբրայերեն նշանակում է ծովում ապրող վիշապ:

[21] Անընթեռնելի ձև:

[22] Անհայտ կամ աղավաղված ձև: Գուցե՝ մահակուլ:

[23] Պատարագն:

[24] Մատ. Ի Ե. 1: Ձեռագրում՝ է, փոխ. ե:

[25] Երկու տեղ բնագրում հանդիպում է գաղափարագիր նշանը, որ Ծ-ի ձև ունի: Նպատակահարմար համարեցինք այն չվերծանել՝ թյուրիմացություններից խուսափելու համար:

Զի աւրինադրէ Մովսէս այսպէս. « [….] որդոյն ի լի, եթէ հարկան զկին յղի, և նա անցուցանէ զսաղմն, ժողովեսցեն քահանայքն և տեսցեն, թէ նկարեալ իցէ մանուկն, մահապարտ է, որ եհար զկինն, ապա թէ ոչ իցէ նկարեալ, ազատ է յարենէ»[26]: Այսպէս, մինչդեռ չէ նկարեալ ի մէջ ձուոյն՝ կիթ է: Եւ ոչ թռչուն, զի ոչ ունի արեան զօրութիւն: Եւ ամենայն անասունք և թռչունք ի ջրոյ գոյանան, ի ջրոյ ունին ծնունդ: -- Ծ*-- ասաց Աստուած բաշխեսցեն ջուրք զթռչունս և զկէտս մեծամեծս, և ամենայն ժամ զջուրն ըմպեմք, այլ ոչ թէ զկենդանիսն ուտեմք, որ ի ջուրն ծնանին և են յազգ յանեղաց, որ յօդոցն յղանան, թռչուն կերպարանեն: Եւ մեք յամենայն ժամ զօդս կլանեմք ընդ շնչափողս, այլ ոչ եթէ կենդանի անգղն ուտեմք, մեղուք և պիղծք: Եւ ոչ նմանեն սոցա՝ ի խոնաւութենէ ծանին, և ի քաղցրութենէ մեղուին ճաշակեմք, այլ ոչ եթէ զթռչունն ուտեմք և վասն այսորիկ մի համարեմք. կէտ, զձու և զիւղ, և [զ]պանիր, և զգինի, որպէս նկարեցի ձեզ ի նկարագրեալդ: Եւ այլ աւելորդն լռութիւն պատուեսցի, մեք զայդ իմացաք. զպատճառ մեր փանաքիմաց գիտութիւն Քրիստոս[ի]: Ողջ լե՛ր, գիտնական[27] խնամոցն, ո՛վ վեհագոյն իմաստութեամբ պատուեալ Գրիգոր վեստարիս:

---

[26] Ելք. ԻԱ. 22. «Իսկ եթէ կռուիցին արք երկու, և հարկանիցեն զկին յղի և ելանիցէ սաղմն աննկար, կէս վնասու տուժեսցի, որչափ ինչ արկանիցէ նմա այր կնոջն, և տացէ աղաչելով»: Ե՛վ տրված, և՛ հետագա մասը աղավաղված է:

*Գաղափարագիր նշանը:

[27] Բնագրում՝ նական :